

# ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ

## ՀԱՅԿԱԿԱՆ ԺԵՍՏԵՐԻ ԼԵԶՎԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ-ՈՒՂԵՑՈՒՅՑ

2017

«ԱԳԱԹ»
ՀԱՏՈւԿ ԿԱՐԻՔՆԵՐՈՎ ԿԱՆԱՆՑ ԿԵՆՏՐՈՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈւԹՅՈւՆ

# ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈւԹՅՈւՆ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ

## ՀԱՅԿԱԿԱՆ ԺԵՍՏԵՐԻ ԼԵԶՎԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ-ՈւՂԵՑՈւՅՑ

ԳՅՈւՄՐԻ
2017

# ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԽՈՒՄԲ

| | |
|---|---|
| Ուղեցույցի պատրաստում, համակարգչային խմբագրում և դիզայն՝ | Մարինե Ավետիսյան |
| Ժեստերի հավաքագրում և մշակում, մասնագիտական խմբագրում՝ | Ռոզա Ավագյան |
| Ժեստերի սրբագրում՝ | Գոհար Մելիքյան |
| Լուսանկարիչ՝ | Թոնգ Դո |
| Ժեստերի ցուցադրողներ՝ | Արշալույս Բոյաջյան<br>Արտյոմ Տեր-Գևորգյան |
| Ծրագրի ղեկավար՝ | Գայանե Գրիգորյան |

U.S. Embassy in Armenia

Ուղեցույցը հրատարակվել է «Ազաթ» հատուկ կարիքներով կանանց կենտրոն հասարակական կազմակերպության կողմից «Ճանապարհորդություն բոլորի համար» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվել է ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության հասարակայնության հետ կապերի գրասենյակի դրամաշնորհի շրջանակներում: Ուղեցույցում հեղինակի արտահայտած կարծիքի, եզրակացության կամ առաջարկության համընկնումը ԱՄՆ կառավարության դիրքորոշման հետ պարտադիր չէ:

# ՆԱԽԱԲԱՆ

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում բնակվում է լսողության խնդիրներ ունեցող անձանց մի մեծ համայնք: Նրանք ունեն իրենց մայրենի լեզուն, մշակույթը, պատմությունը:

Հայաստանի Հանրապետությունում ժեստերի լեզուն ճանաչված չէ որպես պետական լեզու: Լսողության խնդիրներ ունեցող անձինք ունեն հաղորդակցման և մատչելի տեղեկատվություն ստանալու լուրջ խնդիրներ. նրանք բախվում են բազմաթիվ դժվարությունների կրթական, առողջապահական, զբաղվածության, սոցիալ-տնտեսական և այլ ոլորտներում: Լսողության խնդիրներ ունեցող անձանց հետ անմիջական շփում ունեցողների մեծ մասը չեն տիրապետում ժեստերի լեզվին, անբավարար են ժեստերի լեզվի թարգմանիչների քանակը:

Հայաստանի Հանրապետությունը, որպես ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվեցիան (UN CRPD) վավերացրած երկիր, միջազգային պարտավորություններ է ստանձնել՝ ապահովելու հաշմանդամություն ունեցող անձանց տարբեր իրավունքների կիրարկումը մեր երկրում, այդ թվում՝ լսողության խնդիրներ ունեցող անձանց իրավունքները: Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով ՄԱԿ-ի կոմիտեն Հայաստանի նախնական զեկույցի վերաբերյալ իր եզրափակիչ դիտարկումներում առաջարկում է ճանաչել ժեստերի լեզվի կիրառումը որպես պաշտոնական հարաբերությունների լեզու:

«Ազաթ» հատուկ կարիքներով կանանց կենտրոն հասարակական կազմակերպությունը նախաձեռնել և ստեղծել է ճանապարհորդական բառարան-ուղեցույց, որով խթանում է լսողության խնդիրներ ունեցող անձանց ճանապարհորդելու իրավունքը, նրանց խրախուսում է ճանապարհորդել, մասնակցել տարբեր կրթական և մասնագիտական փոխանակման ծրագրերի:

Նախաձեռնությունն իրականացվել է «Ճանապարհորդություն բոլորի համար» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվել է ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության հասարակայնության հետ կապերի գրասենյակի դրամաշնորհի շրջանակներում: Ծրագրի շրջանակներում ստեղծված ճանապարհորդական բառարան-

ուղեցույցը իր տեսակով առաջինն է Հայաստանում: Բառարանում ընդգրկված են ճանապարհորդության բնագավառին առնչվող 156 առաջնային ժեստեր: Բառարան-ուղեցույցը նախատեսված է ճանապարհորդական գործակալների, ուղևորափոխադրում իրականացնող ընկերությունների աշխատակիցների և այլ շահագրգիռ կողմերի համար: Այն կօգնի լսողության խնդիրներ ունեցող անձանց և հասարակության այլ անդամներին ավելի հեշտ և մատչելի հաղորդակցվել, հաստատել միջազգային կապեր և ճանապարհորդել:

**«Ագաթ» հատուկ կարիքներով կանանց կենտրոն հասարակական կազմակերպություն**

# ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
## (շարժումներ)

| | |
|---|---|
|  | Դեպի աջ (հորիզոնական) |
|  | Դեպի ձախ (հորիզոնական) |
|  | Դեպի վեր (ուղղահայաց) |
|  | Դեպի ներքև (ուղղահայաց) |
|  | Թեք դեպի վերև՝ աջ |
|  | Թեք դեպի վերև՝ ձախ |
|  | Թեք դեպի ներքև՝ աջ |
|  | Թեք դեպի ներքև՝ ձախ |
|  | Թեք դեպի կենտրոն-հետ |
|  | Հորիզոնական դեպի աջ և ձախ |
|  | Ուղղահայաց վերև-ներքև |
|  | Հորիզոնական աջ և ձախ |
|  | Կորագիծ դեպի վերև՝ աջ |
|  | Կորագիծ դեպի վերև՝ ձախ |
|  | Կորագիծ դեպի ներքև՝ աջ |
|  | Կորագիծ դեպի ներքև՝ ձախ |
|  | Ալիքաձև, հորիզոնական աջ |
|  | Ալիքաձև, հորիզոնական ձախ |
|  | Ալիքաձև, հորիզոնական ներքև |
|  | Ալիքաձև |
|  | Կրկնվող հորիզոնական աջ և ձախ |
|  | Կրկնվող ուղղահայաց վերև և ներքև |
|  | Ուղղահայաց շրջանագիծ |
|  | Հորիզոնական շրջանագիծ |
|  | Շրջանաձև |
|  | Զիգզագաձև |
|  | Պարուրաձև շարժում |
|  | Կորաձև շարժում |
|  | Կրկնվող կիսաշրջան |
|  | Կորագիծ, աջ |
|  | Կորագիծ, աջ և ձախ |
|  | Կրկնվող կորագիծ, աջ և ձախ |
|  | Շրջան, ներքև |
|  | Ալիքաձև ներքև |
|  | Եռանկյունաձև |


Ա
Բ
Գ
Դ
Ե
Զ
Է
Ը
Թ
Ժ
Ի
Լ
Խ
Ծ
Կ
Հ
Ձ
Ղ
Ճ
Մ
Յ
Ն
Շ
Ո
Չ
Պ
Ջ
Ռ
Ս
Վ
Տ
Ր
Ց
Ու
Փ
Ք
և
Օ
Ֆ


1
2
3
4
5
6
7
8
9
10
20
30
40
50
60
70
80


90


100


200


300


400


500


600


700


800


900


1000


2000


3000


4000


5000


10000


1 միլիոն


1 մլրդ



**ԲԱՐԵՎ ՁԵԶ**

2 ձեռքի կոր «Վ» մատնաձևը հպել կրծքին՝ բացելով ուղղել առաջ:



**ՈՐՏԵ՞Ղ**

«Ու» մատնաձևը շարժել աջ ու ձախ (կրկնվող շարժում), ապա 2 ձեռքով «Վ» մատնաձևը շարժել ներքև:



**ՈՐՈՎՀԵՏԵՎ / ՔԱՆԻ ՈՐ**

2 ձեռքի «1» մատնաձև: Ձախը՝ անշարժ, աջ ձեռքի ցուցամատը կորագծով շարժել ձախ ձեռքի ցուցամատի վրա:



**ԻՆՉՈՒ՞**

Աջ ձեռքի «1» մատնաձևը տեղում պտտել:



**Ե՞ՐԲ**

Աջ ձեռքի կոր «Վ» մատնաձև: Շարժել աջ ու ձախ:



**Ի՞ՆՉ**

Աջ ձեռքի «1» մատնաձևը թեթևակի շարժել աջ ու ձախ:



**Ո՞Վ**

Աջ ձեռքի «Լ» մատնաձևը թեթևակի շարժել առաջ ու հետ:



**ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ**

2 ձեռքի «Վ» մատնաձև: Ձախ ձեռքը պահել անշարժ, աջ ձեռքը շարժելով, թեթև հպել ձախ ձեռքի ափին:



**ՀԱՍՑԵ**

**ՏՈՒՆ՝** 2 ձեռքի «Վ»մատնաձև, մատների ծայրերը միացնել իրար: **ՓՈՂՈՑ՝** 2 ձեռքի «Վ» մատնաձև, մի ձեռքը սահեցնել մյուսի վրայով:



**ԿՇԵՌՔ**

2 ձեռքի «Վ» մատնաձևը հերթականությամբ շարժել վերև ու ներքև:



**ԱՆՈՒՆ**

Ձախ ձեռքի բութ մատը բաց՝ աջ ձեռքի ցուցամատը թեթև հպել ձախ ձեռքի բութ մատին:



**ԱԶԳԱՆՈՒՆ**

Ձախ ձեռքի «Գ» մատնաձև՝ աջ ձեռքի ցուցամատը թեթև հպել ձախ ձեռքի ցուցամատին:



**ՀԱՅՐԱՆՈՒՆ**

Ձախ ձեռքի «3» մատնաձև՝ աջ ձեռքի ցուցամատը թեթև հպել ձախ ձեռքի միջնամատին:



**ԱՆՁՆԱԳԻՐ**

2 ձեռքի «2» մատնաձև: Մատները հպել իրար, շարժել վերև, ներքև:



**ՏՈՄՍ**

Աջ ձեռքի «Ճ» մատնաձև: Ցուցամատը փակ, ձեռքը թեթևակի շարժել տեղում:



**ԺԵՍՏ**
Աջ ձեռքի «5» մատնաձև:
Շրջանաձև շարժել:



**ԽՈւԼ**
Աջ ձեռքի «1» մատնաձև:
Ցուցամատը ականջից շարժել
դեպի բերանը:



**ԻՆՉՊԵ՞Ս ԵՍ**
Աջ ձեռքի «Ա» մատնաձև:
Բութ մատը բաց դեպի վերև,
թեթև շարժել աջ ու ձախ:



**ԼԱՎ**
Աջ ձեռքի «Ա» մատնաձև:
Բութ մատը բաց դեպի վերև:



**ՎԱՏ**
Աջ ձեռքի «Ա» մատնաձև:
Բութ մատը բաց դեպի ներքև:



**ԵՐԿՈւՇԱԲԹԻ**

Աջ ձեռքի «2» մատնաձև:
Ձեռքը կիսաշրջանաձև շարժել տեղում:



**ԵՐԵՔՇԱԲԹԻ**

Աջ ձեռքի «3» մատնաձև:
Ձեռքը կիսաշրջանաձև շարժել տեղում:



**ՉՈՐԵՔՇԱԲԹԻ**

Աջ ձեռքի «4» մատնաձև:
Ձեռքը կիսաշրջանաձև շարժել տեղում:



**ՀԻՆԳՇԱԲԹԻ**

Աջ ձեռքի «5» մատնաձև:
Ձեռքը կիսաշրջանաձև շարժել տեղում:



**ՈւՐԲԱԹ**

Աջ ձեռքի «Ու» մատնաձև:
Ձեռքը շարժել տեղում:



**ՇԱԲԱԹ**

Աջ ձեռքի «Ֆ» մատնաձև:
Ձեռքը շարժել տեղում:



**ԿԻՐԱԿԻ**

2 ձեռքի «Վ» մատնաձև:
Ձեռքերը համաչափ շարժել ներքևից վերև:



## ԾՈՎ

2 ձեռքի «5» մատնաձև:
Ձեռքերը օդում ալիքաձև
շարժել դեպի առաջ՝
ցուցադրելով ալիքներ:



## ԳԵՏ

Աջ ձեռքի «Է» մատնաձև:
Դաստակն ալիքաձև շարժել
վերևից ներքև:



## ԼԻՃ

Աջ ձեռքի «Վ» մատնաձև:
Շարժել դաստակը բերանի մոտ,
ապա աջ ձեռքի «Օ» մատնաձև և
պտտել շրջանաձև:



**ՆԱՎ**

2 ձեռքի «Վ» մատնաձև:
Ձեռքերը հպել իրար, շարժել դեպի առաջ:



**ԱՎՏՈԲՈՒՍ**

2 ձեռքի «500» մատնաձև:
Ձեռքերը միաժամանակ շարժել աջից ձախ:



**ԱՎՏՈՄԵՔԵՆԱ**

2 ձեռքի «Օ» մատնաձև:
Ձեռքերը միաժամանակ շարժել:



**ԳՆԱՑՔ**

2 ձեռքի «Պ» մատնաձև:
Մի ձեռքը պահել անշարժ, մյուսը շրջանաձև շարժել տեղում:



**ԻՆՔՆԱԹԻՌ**

Աջ ձեռքի «Ը» մատնաձև:
Ձեռքը բարձրացնել դեպի ձախ ուսը:



**ՏԱՔՍԻ**

Աջ ձեռքի «Ձ» մատնաձև:
Ցուցամատը բաց դեպի վերև,
թեթև շարժել աջ ու ձախ:



**ՔԱՂԱՔ**

Ձախ ձեռքի «Վ» մատնաձև:
Աջ ձեռքի ցուցամատը
շրջանաձև պտտվել և հպել
ձախ ձեռքի ափին:



**ՀԱՅԱՍՏԱՆ**

Ձախ ձեռքի «Ֆ» մատնաձև:
Աջ ձեռքի «Ժ» մատնաձևը շարժել աջ-ձախ՝ միաժամանակ շարժելով մատները:



**ԵՐԵՎԱՆ**

Աջ ձեռքի «Ծ» մատնաձև:
Մատները բացել փակել:



**ՌՈՒՍԱՍՏԱՆ**

Աջ ձեռքի «1» մատնաձև:
Ցուցամատը սահեցնել ծնոտի վրա՝ ձախից աջ, ապա 2 ձեռքով «Վ» մատնաձևը շարժել ներքև:



**ՄՈՍԿՎԱ**

Աջ ձեռքի «Ա» մատնաձև: Աջ ձեռքը հպել այտին և սահեցնել վերևից ներքև:



**ԷՍՏՈՆԻԱ**

Աջ ձեռքի բութ մատը հպել ծնոտին և շարժել ներքև (կրկնվող շարժում):



**ԲԵԼԱՌՈւՍ**

«Ր» մատնաձևը բացելով դարձնել «5» մատնաձև, այնուհետև ցույց տալ Ռուսաստան ժեստը:



**ՄՈԼԴՈՎԱ**

Բացված աջ ձեռքը գլխի մոտից շարժել դեպի աջ՝ դարձնելով «Ժ» մատնաձև:



**ՈւԿՐԱԻՆԱ**

Աջ ձեռքի փակ «Խ» մատնաձև: Ձեռքի փոքրիկ կորագծով կտրուկ շարժել ներս:



**ԼԱՏՎԻԱ**

Աջ ձեռքի «Գ» մատնաձև: Բութ մատը հպել կրծքին, ձեռքը կորագծով շարժել դեպի ներքև:



**ԼԻՏՎԱ**

Աջ ձեռքի «Լ» մատնաձև: Ձեռքը շարժել դեպի աջ՝ դարձնելով «Ա» մատնաձև:



### ԵՎՐՈՊԱ

Աջ ձեռքի «Ե» մատնաձև:
Ձեռքը շարժել կորագծով աջից ձախ՝ միաժամանակ մատնաձևը փոխել «Վ»-ի:



### ԱՄՆ

Աջ ձեռքի միջնամատը հպել ծնոտին՝ շարժելով հետ, առաջ:



### ԱՍԻԱ

Աջ ձեռքի «Ա» մատնաձև:
Ձեռքը կորագծով պտտել:



### ԱՎՍՏՐԱԼԻԱ

2 ձեռքի «Ֆ» մատնաձև:
Ձեռքերը շրջանաձև շարժել տեղում:



### ՎՐԱՍՏԱՆ

Աջ ձեռքի «5» մատնաձև:
Բութ մատը հպել կրծքավանդակին՝ շարժել դեպի ներքև:



**ԱՆԳԼԻԱ**

Աջ ձեռքի «Պ» մատնաձև:
Ձեռքը հպել ծնոտին, ապա իջեցնել աջ ուսին:



**ԲՈւԼՂԱՐԻԱ**

Աջ ձեռքի «Ս» մատնաձևը:
Բութ մատը հպել քթին, կորաձև շարժել տեղում:



**ԳԵՐՄԱՆԻԱ**

Աջ ձեռքի «Օ» մատնաձև:
Ձեռքը այտից զիգզագաձև իջեցնել:



**ԱՎՍՏՐԻԱ**

Աջ ձեռքի «Ա» մատնաձև:
Ձեռքը պտտել տեղում:



**ԱՖՐԻԿԱ**

Աջ ձեռքի «Ե» մատնաձև:
Ձեռքը շրջագծով շարժել դեմքի վրա՝ դարձնելով «5» մատնաձև:



**ԴԱՆԻԱ**

Աջ ձեռքի «3» մատնաձև:
Ձեռքը կրծքավանդակի մոտ ալիքաձև շարժել ներքև:



**ԻՍՊԱՆԻԱ**

Աջ ձեռքի «1» մատնաձև:
Ցուցամատը հպել աջ, ապա ձախ այտին՝ շարժելով ներքև:



**ԻՏԱԼԻԱ**

Աջ ձեռքի «Պ» մատնաձև:
Ձեռքը հպել ծնոտին, ապա ճակատին, շարժել դեպի աջ:



**ՀՆԴԿԱՍՏԱՆ**

Աջ ձեռքի ցուցամատը հպել ճակատին՝ պտտելով տեղում:



**ՌՈՒՄԻՆԻԱ**

Աջ ձեռքի «Վ» մատնաձևը շրջանաձև պտտել այտի վրա:



**ԼԵՀԱՍՏԱՆ**

Աջ ձեռքի «Վ» մատնաձև:
Ձեռքը հպել ձախ թևին,
կորաձև շարժել վերև:



**ՀՈՒՆԱՍՏԱՆ**

Աջ ձեռքի «Խ» մատնաձև:
Մատը հպել քթին, ապա՝
ծնոտին:



**ՀՈԼԱՆԴԻԱ**

Ձախ ձեռքի «Ա» մատնաձև:
Աջ ձեռքի «1» մատնաձև:
Աջ ձեռքը հպել ձախ ձեռքին,
կտրուկ հետ քաշել:



**ՆՈՐՎԵԳԻԱ**

Աջ ձեռքի «Ն» մատնաձև:
Ձեռքը կիսաշրջանաձև
պտտել տեղում:



**ՇՎԵԴԻԱ**

2 ձեռքի «Ֆ» մատնաձև:
Ձախը՝ անշարժ, աջ ձեռքը
հպել ձախ ձեռքին, շարժել
վերև՝ դարձնելով «Ժ»
մատնաձև:



**ՇՎԵՅՑԱՐԻԱ**
Աջ ձեռքի «Պ» մատնաձև:
Կրծքավանդակի վրա խաչաձև շարժել:



**ԻՍՐԱՅԵԼ**
Աջ ձեռքի ցուցամատը զիգզագաձև շարժել ներքև:



**ԵԳԻՊՏՈՍ**
Աջ ձեռքի «Ֆ» մատնաձև:
Ձեռքը հպել գլխին, ապա իջեցնել ծնոտին:



**ՃԱՊՈՆԻԱ**
Աջ ձեռքի «Ե» մատնաձև:
Ձեռքը հպել ճակատին, ապա բացել՝ դարձնելով «5» մատնաձև:



**ՖՐԱՆՍԻԱ**
Աջ ձեռքի «Օ» մատնաձև:
Ձեռքը կորագծով շարժել դեպի ներքև:



**ՎԻԵՏՆԱՄ**
Աջ ձեռքի «Վ» մատնաձև:
Ձեռքը հպել գլխին, ապա, շարժելով ներքև, հպել այտին:



**ԹՈՒՐՔԻԱ**
Աջ ձեռքի «Ժ» մատնաձևը շարժել ականջի մոտ (կրկնվող շարժում):



**ՀՈՒՆԳԱՐԻԱ**
2 ձեռքի «5» մատնաձև:
Ձեռքերը հպել իրար, մատները շարժել տեղում:



**ՍԱՀՄԱՆ**
2 ձեռքի «Ա» մատնաձև:
Աջ ձեռքի բութ մատով արմունկից շարժել դեպի դաստակ:



**ՀՅՈՒՍԻՍ**
Աջ ձեռքի «Վ» մատնաձև:
Ձեռքը շարժել գլխից դեպի
վերև:



**ՀԱՐԱՎ**
Աջ ձեռքի «Վ» մատնաձև:
Ձեռքը կրծքավանդակից
շարժել դեպի ներքև:



**ԱՐԵՎԵԼՔ**
Աջ ձեռքի «Ա» մատնաձև:
Ձեռքը շարժել դեպի աջ:



**ԱՐԵՎՄՈՒՏՔ**
Ձախ ձեռքի «Ա» մատնաձև:
Ձեռքը շարժել դեպի ձախ:

**Բառարան-ուղեցույցի հեղինակային իրավունքը պատկանում է «ԱԳԱԹ» ՀԿ-ին**

Հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի 3114, Բաղրամյան 17

Հեռախոս՝ (+374) 312 41254

Ֆաքս՝ (+374) 312 42261

Բջջային՝ (+374) 77 043 042

Էլ հասցե՝ agate.ngo@gmail.com

Վեբ կայք՝ www.agatengo.org

www.facebook.com/agate.ngo

Գիրքը վաճառքի ենթակա չէ

